

ԳՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի դոցենտ,
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՅՈՒ «ՏԱՂ ՔԱՁԻ ԼԻՊԱՐՏԻՆ» ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՂԲԸ

Քանալի բառեր. Միջնադարեան տաղերգություն, պատմական ողբ, վիպական տաղ, զրոյց, ժողովրդական բանահյուսություն, պատկեր, հերոսական կերպար:

Key words: Medieval hymnody, historical lamentation, lyric poem, tale, folklore, icon, heroic image.

Թլկուրանցին միշտ էլ հայ միջնադարեան բանաստեղծությունը հետազոտողների ուշադրության կենտրոնում է եղել, սակայն, որքան էլ զարմանալի է, ի տարբերություն նրա սիրոյ տաղերգության, վիպական տաղերը անբաւարար են ուսումնասիրուել ու գնահատուել: Իրականում վիպական տաղերը եւս առանձնապէս կարեւոր են բանաստեղծի շափածոյի ընդհանուր համակարգում, քանի որ ինչ-որ շափով աւելացնում են հայ միջնադարեան պոեզիայի էպիկականությունը, որ նրանում համեմատաբար թոյլ է արտայայտուել: Յովհաննէս Թլկուրանցին միջնադարեան առաջին բանաստեղծն է, որը ստեղծել է վիպական տաղեր՝ մշակելով ժողովրդական բանահյուսությունից վերցուած սիւժէներ, որոնք այսօր էլ միջնադարեան քնարերգութեան առաւել արժէքաւոր էջերից են: Դրանցից մեզ են հասել «Աշայի և Յովհաննէսի», «Գեղ մի կայր Նարեկ ասեմ», «Տաղ սրբոյն Ալեքսիանոսի», «Տաղ վասն Սուրբ Յովհաննու գլխատման», «Մեկնութիւն Արարածոց» տաղերը, որոնց մէջ երեւում է զգայուն, աշխոյժ, ինքնատիպ քնարերգակը՝ իրեն յատուկ գունագեղ ու թրթռուն ոճով:

Մեծատաղանդ բանաստեղծի վիպական տաղերի մէջ ամենանշանակալիցը «Տաղ քաջի Լիպարտիմն» է, որն իբրեւ հայրենասիրական ողբ, անշուշտ, այժմ էլ գեղարուեստական և պատմական արժէք ու հետաքրքրություն է ներկայացնում: Թէեւ սա էպիկական ստեղծագործություն է, սակայն պատմողական ձեւը երանգաւորուած է պայծառ տաղերգուի մեղմ քնարականութեամբ ու բացառիկ յուզականութեամբ: Այս տաղն անտարբեր ու սառը մի պատում չէ, այլ սրտալի ու մտերմիկ զրոյց է, հերոսական մի հետաքրքիր ողբերգ:

«Տաղ քաջի Լիպարտիմն» առաջին անգամ ձեռագրերից լոյս աշխարհ հանեց մեր գրականութեան շատ սիրուած բանաստեղծներից մէկը՝ մեծանուն գիտնական Ղեւոնդ Ալիշանը¹: Յետագայում Ն. Ակինեանը² ներկայացրեց տաղի քննական բնագիրը՝ նկատի առնելով ոչ միայն Ղ. Ալիշանի հրատարակածը, այլեւ մեր Մատենադարանի

¹ Նախ 1868թ. «Բազմավէպում», «Հոգովդ սուրբ ես և ամբիծ» բանաստեղծութեանն աղբյւրներ, Ալիշանը հրատարակեց տաղի սկզբի առաջին երեք տները (1-4 և 7-8 տողերը), ապա 1885 թուին՝ ամբողջական բնագիրը «Սխումանում», յետագայում էլ՝ «Հայապատումում»: Սակայն դեռեւս անյայտ է, թէ բանասէրն ինչ ձեռագիր աղբիւրներ ու հիմքեր է ունեցել:

² «Քաջն Լիպարտիտ պատմութեան, տաղերու և զրոյցներու մէջ» (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1933, էջ 129-138):

Թիւ 515 ձեռագրի թերի օրինակը, որը պարունակում է միայն 33-50 տողերը: Այս նշուած օրինակները հիմք ընդունելով՝ համեմատական բնագիր է հրատարակել էմ. Պիվագեանը³, բայց նա տաղի սկզբում կցել է, այսպես կոչուած, մի նախերգանք, որը և՛ իր ոճով, և՛ շարադրանքով, և՛ բովանդակութեամբ XIX-րդ դարի գործ է յիշեցնում, հաւանաբար Ղ. Ալիշանի գրչին է պատկանում և՛ ոչ Թլկուրանցու: Տաղը թերի վիճակում հրատարակել էր նաեւ Կ. Կոստանեանցը⁴: Թլկուրանցու ողբի ամբողջական, քննական օրինակը կազմել է անուանի բանասէր Պ. Խաչատրեանը⁵: Նա վերականգնել ու շտկել է գրաքննչական պատճառներով փոխառուած բառերը, ճշդել և լրացրել աղարտուած ու պակասաւոր մնացած տողերը՝ հիմք ունենալով, բացի նշուած օրինակներից, նաեւ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի թիւ 1371 տաղարանում պահպանուած՝ մինչ այդ անյայտ մի օրինակ:

Այսօր էլ խնդրոյ առարկայ տաղը շարունակում է գրականագիտութեան ուշադրութեան կենտրոնում լինել: Այս առումով արժէ յիշատակել գրականագէտ Վանո Նդիազարեանի՝ Թլկուրանցու ստեղծագործութեանը նուիրուած ուսումնասիրութիւնը⁶:

Պատմական յայտնի և նշանաւոր դէմք է եղել Լիպարիտը՝ Կիլիկիայի հայկական պետութեան վերջալոյսին հայ ժողովրդի գոյատեւման պայքարի համարնահատակուած հերոսը: Պատերազմներում բազում անգամ յաղթանակած սպարապետն իր բազկի հզօր ոյժով պաշտպան է կանգնել հայրենի հողին, վայելել իր ժողովրդի սէրն ու վստահութիւնը և ընկել կռուի դաշտում՝ իբրեւ հայրենիքի ազատութեան սուրբ նահատակ:

Քաջ Լիպարիտի լեգենդար կերպարն իր արժանի արտայայտութիւնն է ստացել միջնադարեան գրականութեան մէջ: Մեզ են հասել «Պատմութիւն քաջ Լիպարիտին» խորագրով գրույցը, ժամանակագրական մի քանի կտորներ ու ձեռագրական սակաւաթիւ յիշատակարաններ: Իսկ Թլկուրանցու քնարական ողբն արդէն լրացնում և ամբողջացնում է Սսի խիզախ պաշտպան մարաշախտի՝ գրչագրերում տեղ գտած կերպարի մասին: Բանաստեղծն այստեղ ջերմօրէն գովերգում է պատմական հերոսին ու կերտում մի հզօր դիւցազնի կերպար: «Տաղ քաջի Լիպարիտին», ըստ Լէօյի, «մի փոքրիկ դյուցազներգություն է», իսկ Թլկուրանցին՝ «հայ ժողովրդական բանաստեղծների մէջ առաջինն է և միակը, որ ժողովրդական վեպից փերթված է շինել»⁷:

Քաջ Լիպարիտը⁸ զօրավարական գործունէութիւն է ծաւալել 1360-ական թուականներին, երբ Կիլիկիայի հայկական պետութիւնը սեղմուած էր մի փոքր տարածքի վրայ՝ ենթակայ եգիպտական մամլուքների և թուրք հրոսակների անընդհատ յարձակումներին: Երկրի բոլոր կողմերից արաբ, սելջուկ ու զահրաման ասպատակներն աւերում ու ամայացնում էին հայկական տեղամասերը, թալանում ու կոտորում ժողովրդին: Լիպարիտն, ամենայն հաւանականութեամբ, սպարապետ է եղել Կոստանդին V-ի (1365-73 թթ.) թագաւորութեան սկզբի տարիներին՝ յատկապէս 1367-69 թուականներին, երբ Սիս մայրաքաղաքի վրայ անընդմէջ արշաւում էր մինչ

³ Յովհաննէս Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրութեամբ էմ. Պիվագեանի, էջ 197:

⁴ Տէս Կ. Կոստանեանց, Յովհաննէս Թլկուրանցին եւ իւր տաղերը, Թիֆլիս, 1892, էջ 52-56:

⁵ Պ. Խաչատրյան, Հովհաննէս Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարիտին» (տէս «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ [հասարակական գիտություններ]», Երևան, 1964, N 11, էջ 97-102):

⁶ Վ. Նդիազարյան, Հովհաննէս Թլկուրանցու կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2001:

⁷ Տէս Լեո, Հայոց պատմություն, հտ. Գ., Երևան, 1946, էջ 214:

⁸ Լիպարիտի անունն առաջին անգամ յիշատակել է Թորոս Ռուբինեանց ֆահանգն, 1361 թ. գրուած մի յիշատակարանում, որից յայտնի է դառնում, որ նոյն թուին Սիս փառաւորն նա աւարտել էր «Մեծին Ներսէսի վարուց պատմութիւն» երկի ընդօրինակումը: Յիշատակարանում գրուած է. «...ի խնդրոյ սրբասէր, հեզ, փաղոյր և խոնարհ իշխանացն՝ պարոն Լիպարիտի և պարոն Վապիլի, որդուցն պարոն Թորոսի Կապնցոյն՝ սպարապետին Հայոց, ի վայելումն անձանց իւրոց...» (տէս Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 451): Սակայն այստեղ Լիպարիտի համար զինուորական ոչ մի աստիճան չի ակնարկուած, նաեւ դեռեւս անյայտ է, թէ յիշատակարանը գրուելու ժամանակ արդեօք ապրում էր նրա հայրը՝ Թորոս իշխանը, որից յետոյ նա կարող էր ստանալ մարաշախտի աստիճանը:

այդ գրառումած Տարսոնի եգիպտական ամիրայ Շահարողլի Մանչակը, որի նպատակն էր վերջնականապես կործանել Կիլիկիայի հայկական պետականությունը: Ահա այդ արշաւանքների մասին է գրում բանաստեղծը.

Պատերազմին չըկայր խափան,

ամէն տարի՝ տասն ու քսան...⁹:

Հստ Կիլիկիայի ժամանակագրի¹⁰, 1367 թ. մայիսին եգիպտական կուսակալ Մանչակը հաւաքում է «ի Շամբուն հիծելէն քանի որ կարա, և զուրակիր թուրքմանն զամէնն, և այլ բազմում խաւամնցիք»¹¹ և մօտ տասներկու հազարանոց զօրքով յարձակում է Սսի վրայ: Նա փորձում է գրաւել Անցմնցուկ գետակը, որի վրայ կառուցուած կամուրջը ռազմական շատ կարեւոր նշանակութիւն ունէր: Բայց քաղաքի բնակչութիւնը կարողանում է կասեցնել նրա առաջխաղացումը: Խորամանկ զօրավարը պատուիրակութիւն է ուղարկում Կոստանդին V-ի մօտ՝ ցանկանալով «հրաման տալոյ, եթէ զամ առաջի քաղաքին ի ֆոռն՝ վասն տեսանելոյ զքաղաքն»¹²: Նա փորձում է յանկարծակիի բերել հայերին ու նենգօրէն տիրանալ մայրաքաղաքին: Սակայն յայտնի են դառնում այդ մտադրութիւնները, և նրա դէմ են ելնում հայկական ողջ մարտունակ ոյժերը՝ խիզախ սպարապետի առաջնորդութեամբ, որը

Քան ըզՄուշեղն այլ խիստ յաղթող,

քան ըզՏըրդատ Հայոց արքայն...:

Անձնուէր զօրավարը ջարդում ու հալածում է թշնամու մեծաթիւ զօրքը: Նրա սրից խոցուածների թուում էր և Մանչակի «գոված տղան»: Ահա այս ճակատամարտի առիթով է Լիպարիտը յիշատակում իբրեւ աւագ մարաշախտ¹³:

Սակայն երկու տարի անց Մանչակը նորից է յարձակում Սսի վրայ՝ այս անգամ շատ աւելի մեծաքանակ բանակով (վաթսուն հազար): Դարձեալ նրա դէմ է դուրս գալիս Սսոյ քաջ պաշտպան Լիպարիտը՝ պատուիրակով Կոստանդին V-ին պահել Անցմնցուկի կամուրջը: Քաջաբար խիզախելով թշնամու դէմ՝ սպարապետն անխնայ կոտորում է հրոսակներին.

Յիշեաց գՔրիստոս ահեղաձայն,

կըտրեց՝ անցաւ առիծնրման.

Ջհեծելն արար փախըստական

՝ ի հետն երթայր ընծանրման:

Լաշկարն արար դիզան դիզան,

հանց որ արին գետեր ելան...

Բայց անհաւասար կռուում զոհւում է նուիրեալ զօրավարը: Թշնամին կարողանում է գրաւել կամուրջը, որը թագաւորն անզօր էր եղել պաշտպանել: Ահա նկարագրուած իրադարձութիւններն են, որ այնքան սրտայոյզ ոգով ողբում է Թլկուրանցին:

Այս վերջին անցքի համառօտ, բայց հաւաստի նկարագիրը գտնուել է Բրիտանական թանգարանում պահպանուած XIV դարի հայերէն մի գրչագրում, որը Թլկու-

⁹ Տե՛ս «Տաղ քաջի Լիպարտին» // **Պ. Խաչատրյան**, նշ. աշխ, էջ 99: (Տաղից յետագայ մէքերումները եւս այս տպագրից են):

¹⁰ Անյայտ հեղինակ, որի ժամանակագրութիւնը յայտնի է «Սիսուանից», Ալիշանի քաղաւածաբար օգտագործումով միայն (հատուածները տե՛ս «Սիսուանի» յաւելումում, էջ 531-548):

¹¹ **Լ. Խաչիկյան**, Ժ՛ի դարի հայերէն ձեռագրերի հիշատակարանները, էջ 477:

¹² Նոյն տեղում:

¹³ Նոյն տեղում:

րանցու տաղի արժանահաւատութիւնը հաստատող վաւերագիր է: Այդ հետաքրքիր ձեռագրի գրիչը Լիպարիտի եղբայր Վասիլն է. «Ի թվին ՊԺԸ (1369)-ն ի մայի [ս] ամսուս Ի(20)-ն երեկ Տարսոյ նայիպն Շուհորէ որդին ի վերայ Սըսու: Ի շաբաթ օր կոռեցան Յուսին դինն ու իրք մի վզեն չկարցին այնել: Ու կերակի ի վաղուենէ եկին յԱնցմնցկին կանդարայն հեծմնով ու հետևկով, որին կոխ ու խանկրեցին գրիստոնէին ու սպանին Ճ (100) մարդ: Ու սպանին զպարոն Լիպարիտ՝ պարոն Թորոս ավաք մարաջախտուն որդին, ու այրեցին զֆաղաֆն ու զդարպասն: Ու կեցաւ Գ (3) ար ու դարձաւ ի յիր տեղն ի Տարսուս: Կու ասեն, թէ Կոստընդին թագաւոր՝ պարոն Հեթմու որդին, եբեր զհիծելն ու տուր տուեց զպարոն Լիպարիտն ու զֆաղաֆն տանկին»¹⁴:

Այսինքն՝ Կոստանդին V թագաւորն ատել է Լիպարիտին և յանձին նրա տեսել գահի իր մրցորդին: Նա նոյնիսկ վախ է ունեցել սպարապետից և վտանգուած տեսել իր թագն ու արքայական դիրքը: Սրա լաւագոյն արտայայտութիւնը «Պատմութիւն ֆաջ Լիպարտին» գրոյցն է. «Եւ թագաւորն Հայոց երկեաւ ի ֆաջ Լիպարտին, զի մի գուցէ եւ զինքն սպանանէ եւ ինքն թագաւորէ»¹⁵: Կոստանդին V-ի տագնապներն իհարկէ իզուր չեն եղել, քանի որ ռազմավարական մեծ տաղանդով օժտուած զօրավարը հաւանաբար շատ սիրուած է եղել ժողովրդի կողմից և համարուել երկրի միակ պաշտպանն ու յոյսը: Քաջ Լիպարիտը յիշեցնում է մեր էպոսի սիրուած հերոսներին՝ Մեծ Մհերին, Դաւթին, Փոքր Մհերին, որոնք իրենց դիւցազնական հզօր ոյժով պահում էին Սասունն ու սասունցիներին:

Սակայն գահի հանդէպ սպարապետի յաւակնութիւնները պայմանաւորուած են եղել ոչ միայն շատ սիրուած լինելով, այլ նաեւ ծագմամբ: Ու թէեւ վերը յիշատակուած գրոյցում ասուած էր, թէ Լիպարիտը գահ բարձրանալու ոչ մի ցանկութիւն չի ունեցել՝ («Այլ ֆաջ Լիպարտին հոգով եւ մարմնով ոչ ունէր այնպէս վատ խորհուրդ»¹⁶), բայց չի բացառոււմ և հակառակը, քանի որ որոշ հիմքեր դրա համար կան Բրիտանական թանգարանի թիւ 5458 ձեռագրում: Այս տեսակէտի շուրջ աւելի հանգամանալից ուսումնասիրութիւն է կատարել և համոզիչ կերպով ապացուցել նշանաւոր բանասէր Պ. Խաչատրեանը՝ «Տաղ ֆաջի Լիպարտին» քննութեան մէջ¹⁷: Նա գտնում է, որ այս ձեռագրի Սմբատ Գունդստաբլի Տարեգրութեան անանուն շարունակողի բաժնում հայկական ԶԾԷ (1308) և ԶԿ (1311) թուականների դիմաց լուսանցքում գրուած լրացումը՝ «Ի սոյն ամի (այսինքն՝ 1308թ.-Պ. Խ.) գնաց Օշին թագաւոր ի Թաւրէժու դանն վասն երկրիս կարե[ա]յ, որ և ար[ար] խնամութիւն ընդ Գորգէն թագաւոր Վրաց ու այրին պոմն թուխք առջի դանին՝ գԴաւիթ որդի Վրաց թագաւորին ի հետ տամուծել Ալիծին՝ փոքր forն Օշին թագաւորին, ու եբեր գԴաւիթն ի հետն ու ի թվ[ին] ԶԿ (1311)-ն արար հարսնիք ի Զ (6)-ն յունուարն ի Տարսուս ու երեա սիգդով զԿապանն իր երկրովն ու հաստատեց զպարոն Դաւիթն գունք Կապնուն երկրին թագաւորէն, տէր էվանէ արհիեպիսկոպոսն Սիւնեաց և պարոն Շահէնշահ աւագ մարաջախտն Վրաց, և այրին պոման, որ հայոց սահմանով կենաց, և ոչ մի բան ֆոանգութեան շլինի յիր ամէն կենդանութեանն», հիմք է տալիս հաստատելու վերը նշուածը:

Այս ենթադրութիւնը առիթ է տալիս նաեւ Կիլիկիայի պատմութեան քաջատեղեակ բանաստեղծ Ղ. Ալիշանի այն տեսակէտը, որ Լիպարիտ «անունն անգամ անծանօթ և անսովոր է բոլոր Կիլիկեցոց պատմութեան մէջ, և սովորագոյն է վրացահայոց ու մանաւանդ Ուսպելեան տոհմին մէջ»¹⁸: Լիպարիտի անուան մոտքը հայերի մէջ պայմանաւորուած է վրացական ազդեցութեամբ և այսօր էլ վրացիների մօտ գրեթէ չի

¹⁴ Տէս Պ. Խաչատրյան, Յովհաննէս Թլկուրանցու «Տաղ ֆաջի Լիպարտին» պատմական ողբը // «ՊԲՀ», 1964, թիւ 2, էջ 113:

¹⁵ Տէս Ն. Ակինեանի հրապարակումը «Հանդէս ամսօրեայ» հանդէսում, էջ 131:

¹⁶ Նոյն տեղում:

¹⁷ Տէս Պ. Խաչատրյան, նշ. աշխ. էջ 114-115:

¹⁸ Ղ. Ալիշան, Յուշիկի հայրենեաց Հայոց, հտ. Բ., էջ 509:

հանդիպում¹⁹։ Ուրեմն կարելի է նշել, որ Գորգէն թագաւորի որդին, կնութեան առնելով Լեւոն II-ի դստերը, Օշինից ստացել է կալուածք ու կոչում, կարգուել «գունթ Կապնում»։ Կապանցի է եղել նաեւ Լիպարիտի և Վասիլի հայր Թորոսը։ Թերեւս «վերջինս ծնուած լինէր վրաց արքայազնից ու Ալիծից և, իբրեւ մօր կողմից Հեթումեան դինաստիայից սերած, բարձրացուեւ սպարապետութեան աստիճանի, քանի որ արքայական ընտանիքին արեւակցութեամբ կապուած անձնատուութիւններն էին մեծ մասամբ հաստատում կարեւոր պաշտօններում»²⁰։ Ահա այս ճանապարհով Թորոսի որդին կարող էր ստանալ վրացական Լիպարիտ անունը։ Սակայն այս վարկածը հաստատող որեւէ ձեռագիր ապացոյց դեռեւս չի յայտնաբերուել, այսինքն՝ այն, որ Դաւիթն ու Ալիծը Թորոսի ծնողներն են եղել։ Իսկ եթէ դրա իսկութիւնը ճշդուի, ապա «իր լուսանցագրութիւններով Վասիլը շահարկել է հայկական գանի նկատմամբ Լիպարիտի իրաւունքները»²¹։

Այստեղ հետաքրքիր է մի այլ հանգամանք եւս։ Ըստ պատմագիտական գրականութեան մէջ եղած մի կարծիքի՝ «թագավորը (այսինքն՝ Կոստանդին V-ը) չի կարողանում պահել կամուրջը, որ անցնում է թշնամու ձեռքը»²²։ Բայց Թլկուրանցու տաղի մէջ իրողութիւնն այլ կերպ է մեկնաբանուած, որն աւելի հաւաստի է թուում և համապատասխանում պատմական իրականութեանը.

Նայ թագաւորըն չարացաւ.

զհեծելն առին՝ ի յետ դարձան:

Այսինքն՝ պարզուում է, որ թուլամորթ Կոստանդին V-ը, որը, ժան Դարգէլի վկայութեամբ, կիպրացի էր և հայոց թագաւոր էր ընտրուել չափազանց հարուստ լինելու պատճառով՝ «առ փարթաւութեան»²³ համաձայնութեան է գալիս Եգիպտոսի սուլթանի հետ՝ խոստանալով յանձնել նրան իր թագն ու երկիրը, միայն թէ ապահոված լինի կեանքն ու հարստութիւնը։ Եւ բոլորովին էլ անհաւանական չէ, որ 1369 թ. մայիսեան մի օր նա է դաւադրաբար հրաւիրել Մանչակ ամիրային և, ըստ Վասիլի, նենգօրէն «տուր» տուել, յանձնել «գպարոն Լիպարիտն ու գփաղաֆն տանկին»²⁴։

Իսկ արդեօք Թլկուրանցին եղել է Լիպարիտի ժամանակակիցը, թէ՛ այս մեծ զօրավարի քաջագործութիւնների մասին յետագայում է լսել ականատեսներից։ «Տաղ քաջի Լիպարտինը» դէպքերն այնքան հարազատօրէն է պատկերում և լի է պատմական հաւաստիութեան շնչով, որ բանաստեղծը, Ներսէս Շնորհալու պէս, իր նկարագրածի մասին կարող էր ասել՝ «գիրս եղելոց, մեր ժամանակս դիպելոց»։ Թլկուրանցու ողբը ոչ թէ յօրինուած է ժողովրդի մօտ արդէն ստեղծուած զրոյցների օգտագործում-մշակումով (Պիվագեան), այլ բանաստեղծն ինքն է ստեղծել այն իբրեւ ժամանակակից՝ ոգեշնչուած պատմական եղելութիւնից։ «Տաղ քաջի Լիպարտինը», ինչպէս Դաւիթակ Քերթոզի «Ողբք ի Մանն Զեւանջիւրի մեծի իշխանին» (VII-րդ դար) քերթուածը, պատմական դէպքերի, իրադարձութիւնների անմիջական, անգամ համաժամանակեայ արտացոլումն է։ Իսկ այս տողերը՝

Յորտեղ նըստին հաց՝ի սեղան

ժողովք բազում և շատ իշխան,

Յիշեն ըզնա սորբ քահանայքն,

Կէր ողորսի՞ ասեն նըմա,-

¹⁹ Հ. Անառեանը նոյնպէս հաստատում է այդ անուան վրացական ծագում ունենալը (տե՛ս «Հայոց անձնանունների բառարան», հտ. Բ., Երևան, 1944, էջ 430)։

²⁰ Տե՛ս Պ. Խաչատրյան, նշ. աշխ. էջ 116։

²¹ Նոյն տեղում։

²² Լեւոն, նշ. աշխ. էջ 214։

²³ «Յովհաննու Դարգէլի ժամանակագրութիւն», Ս.- Պ., 1891, էջ 110-111։

²⁴ Տե՛ս Պ. Խաչատրյան, նշ. աշխ. էջ 113։

ցոյց են տալիս, որ շատ թարմ է եղել Լիպարիտի հերոսական մահուան յիշատակը, և անունը՝ այնքան սիրուած ու ճանաչուած, որ ժողովուրդը դեռեւս սգի մէջ է եղել, քահանաները «Տէր ողորմի» են ասել նրան՝ իբրեւ նոր մահացածի: Ուրեմն տաղը պէտք է գրուած լինի այդ դէպքերից (1369 թ.) քիչ անց, և տաղասաց Թլկուրանցին՝ հեղինակը, ապրած XIV-րդ դարում:

«Տաղ քաջի Լիպարտին» վիպական տաղի առաջին մասում Թլկուրանցին իր՝ անձնագոհութեամբ անմոռանալի հերոսի գովքն է անում, իսկ շարունակութեան մէջ նկարագրում կատարուած դէպքերը:

Ահա Սսոյ պաշտպան քաջ զօրավարի ներբողը.

**Յորժամ հեծնուր զիւր ձին վազան,
ի ձեռն առնոյր զըռում ճօճան,
Սասանէր ազգըն թուրքանց,
դողայր ամէն Տաճիկաստան:**

Քաջ ու գովուած հսկայ սպարապետը նման է իր հեռաւոր նախորդին՝ Մուշեղին: Յիշենք Յովասափ Սեբաստացու (XVI-րդ դար) Մուշեղի մասին տաղը, ուր նոյնպէս անշափ գեղեցիկ երգում են Մամիկոնեան իշխանի դիւցազնական ոյժը, նրա բազում յաղթանակները և դաւադիր մահը.

**Միջովն ի վեր քան զամենայն,
Պարթև իզար զարագլիսեան.
Է՛ր քաջասիրտ յառիւծ նման,
Որ ի յահէն աշխարհ դողան՝²⁵:**

Թշնամի թուրքերն անընդհատ յարձակում են Սսի վրայ, և ամէն անգամ նրանց կոտորում ու հետ է շարտում խիզախ սպարապետը: Ահա այս անգամ էլ Մանշակի բանակը նախապատրաստում է յարձակման.

**Վաթսուն հազար մարդ միաբան
զըրենին հագան՝ ի ձին հեծան,
Ձեռուին առին զըռում ճօճան,
թուր և ասպար ու կանգնեցան:
Հարին ըզփող պատերազմին,
զպուկն ու զնաֆիրն ըզգաւ հարկան:**

Հակառակորդի թուական գերակշռութեան կրկնակի նշումով (վաթսուն հազար) բանաստեղծը, կարծես, ցանկանում է աւելի ընդգծել թշնամու սպառնալիքի ահաւորութիւնը, իսկ զինահանդերձման ու ռազմափողերի հնչման նկարագրով էլ աւելի դրամատիկ դարձնել մարտական դիպուածի տեսարանը: Մեծաքանակ թուրքերը բոլոր կողմերից պաշարել են քաղաքը, սակայն չեն համարձակում անմիջապէս ներխուժել, որովհետեւ սսեցիների հետ է քաջ սպարապետը, որին յոյսով ու հաւատով ապաւինել է տազնապած ժողովուրդը: Իսկ թուլամորթ արքան, քէնը սրտում պահած (քանի որ ինքն էր առիթ տուել Մանշակի յարձակմանը, ինչպէս վերը նշուեց), մարտի է հրաւիրում նրան՝ ուղարկելով ստոյգ մահուան.

**Յայնժամ ասէ սուրբ թագաւորն.
«Քաջ Լիպարիտ, մեծ զօրական**

²⁵ Հ. Սեբաստացի, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ՝ Վ. Գևորգյանի, Երևան, 1964, էջ 91:

**Հեծելըս քեզ համար եկան
մինչ յայս տեղիս, ուր կանգնեցան»:**

Քաջ Լիպարիտը թէեւ կանխազգուժ է, որ կռիւն այս անգամ օրհասական է լինելու, թամբում է իր ձին, զինավառուում.

**Քաղցրիկ ետուր պատասխանի,
թէ՛ «Ես՝ քաղքիս չարին փոխան,
Քայց չէ պատեհ զըրուց առնել,
թէպէտ հասաւ ինձ օր մահուան»:**

Եւ խնդրում է նա թագաւորին «հաստատ 'ւ ամուր պահէ զկարմունքն», այսինքն՝ հայոց զօրքերի յետադարձի ճանապարհը: Ողբում յատկապէս անմոռաց է հարազատներից Լիպարիտի բաժանուելու սրտառուչ պահը, որ պատկերուած է շատ մեծ վարպետութեամբ.

**Հառչեաց, զորդեակըն համբուրեաց,
հանց որ զհեծելն ի լաց եհան.
Ասաց. «Որդեակ՛ իմ Յովհաննէս,
Վասիլ եղբայր իմ սիրական,
Փառօք տիկին դու Մանանայ,
իշխանուի՛ արևըման,
Հայեակց պատկերս ի մանկութեան,
որ տի մըտնում ի հող տապան»:**

Հրաժեշտի այս գեղեցիկ և անկրկնելի պատկերը որքան հարազատ է մեր էպոսի սիրուած հերոսներից մէկի՝ Սասունցի Դաւթի հրաժեշտին՝ կռիւ գնալուց առաջ.

**Իմ բուրնր, մերնր, իմ լակ՝ դրկիցներ,
Մնացնք բարով ...²⁶**

Օրհնելով Աստծոյ անունն ու երկրպագելով Քրիստոսին՝ սպարապետն անվախ դուրս է գալիս թշնամու դէմ: Չափազանց հետաքրքիր ու պատկերաւոր է ճակատամարտի տեսարանը: Քաջ Լիպարիտն, ինչպէս Դաւիթը,

**Յիշեաց գՔրիստոս ահեղաձայն,
կըտրեց՛ւ անցաւ առիծըման.
Ջհեծելն արար փախըստական
'ւ ի հետն երթայր ընծանըման:
Լաշկարն արար դիզան դիզան,
հանց որ արին զետեր ելան:**

Եւ թուում է, թէ յաղթանակն արդէն լիարժէք է, բայց հզօր զօրավարի չականկալուող այդ յաջողութիւնից նեղսրտած Կոստանդին V-ը թշնամուն է զիջում իրեն վստահուած կամուրջը.

**Նայ թագաւորըն չարացաւ.
զհեծելն առին՛ ի յետ դարձան:**

²⁶ «Սասունցի Դավիթ», Երևան, 1981, էջ 225:

Թուրքանց հեծելն յառաջ եկին,

զկարմունճեն առին ու կանգնեցան:

Անհաւասար մարտից յոգնած ու յաղթանակած հերոսը վերադառնում է Սիս, բայց յանկարծ կամրջի մօտ անսպասելիօրէն շրջապատւում է դարանակալ թուրքերով, որոնք.

Ըռումք դրին ամէն դիհացն,

շատ խոցեին գյաղթող վրկայն.

Հայեր ողորմ յաջ և ի ձախ՝

զոչ ոք գըտաւ իւր օգնական:

Եւ մեր պատմութեան մէջ յայտնի շատ հերոսների նման նենգ դաւադրութեան զոհ է դառնում Սոյ խիզախ պաշտպան քաջ Լիպարիտը: Սիրելի սպարապետին դրուատելով՝ բանաստեղծն ընդգծում է նրա անփոխարինելի դերը հայրենիքի պաշտպանութեան գործում, որովհետեւ նրանից յետոյ թշնամին անգթօրէն կոտորում է ժողովրդին, աւերում եկեղեցիներն ու վանքերը, սպանում, գերեվարում երէցներին ու սարկաւազներին: Եւ ողջ երկիրն ընկնում է թշնամու դաժան լծի տակ:

Թերեւս մեր էպոսից որոշ մոթիւններ միահիւսուել են յետագայում ստեղծուած քաջ Լիպարիտի զրուցապատումին: Հստ այս վերջինի, երբ սպարապետի գլուխը տանում են Մըսըր՝ եգիպտական սուլթանին, վերջինս խիստ ապշում է. «Եթէ ընդէ՛ր ոչ բերէի՛ք գնա կենդանի առ իս, զի կիմ տայի նմա, որ անէր եւ թագաւոր անէի, ընդդէմ թշնամեաց իմոց կեցուցանէի զնա որպէս պարսպ»²⁷: Յիշենք, որ նոյն նպատակով «Սասնա ծռեր» էպոսում Մսրա Մելիքը Մեծ Մհերին կենակցել է տալիս իր կնոջ հետ, որպէսզի «Իդոր ջընսեն» իրենց «ազկի մէջ ընկնի»²⁸: Նրանց հարազատ է դարձնում նաեւ այն, որ Լիպարիտը նոյնպէս օժտուած է անօրինակ, հզօր ոյժով և Մեծ Մհերի, Դաւթի, Փոքր Մհերի ու միւս հերոսների նման հանդէս է գալիս իբրեւ իր քաղաքի ու ժողովրդի միակ պաշտպան:

«Տաղ քաջի Լիպարտինը» յիշեցնում է միջնադարեան վիպական երգերից մէկը՝ «Լեւոնի երգը» կամ «Ի Լեւոն որդի Հեթում» գործը²⁹, որը ստեղծուել է հաւանաբար XIII դարի երրորդ քառորդում և այն ժամանակ էլ գրի առնուել: Այն նոյնպէս վիպական քնարական մի երգ է՝ ստեղծուած պատմական իրողութեան վրայ, յօրինման ժամանակի ոգով: Իր անձնագոհութեամբ, հայրենիքին նուիրումով քաջ Լիպարիտը նման է Լեւոնին, որը չի տարւում եգիպտական սուլթանի խոստումներով ու դաւադիր փայփայանքներով, չի կրօնափոխուում՝ հաւատարիմ մնալով իր սուրբ հաւատին:

Խիզախ սպարապետ Լիպարիտը եղել է բանաստեղծի երազած կատարեալն ու լաւը, կրել այն մեծ սէրը, որը հայրենի երկրի անկախութեան ու ազատութեան համար զօրավարին մղել է անձնուրաց հերոսութեան ու նահատակութեան:

Նշանաւոր բանասէր Ն. Ակինեանը Լիպարիտի հետ նահատակուող Սիր Յոհաննին նոյնացրել է հերոսի որդի Յովհաննէսի հետ³⁰: Սակայն այդ նոյնացումը հաւանական չի թուում, որովհետեւ Լիպարիտի որդին այն ժամանակ դեռեւս փոքրիկ երեխայ է եղել: Կռուից առաջ հայրը նրան հրաժեշտ է տալիս այսպէս.

Հառաչեաց, զորդեակըն համբուրեաց,

հանց որ զհեծելն ի լաց եհան:

²⁷ Տէ՛ս Ն. Ակինեան, նշ. աշխ., էջ 133:

²⁸ «Սասնա ծռեր», հտ. Բ., մաս 1-ին, Երևան, 1944, էջ 269 (ասացող՝ Մանուկ Թորոյեան):

²⁹ Ա. Մնացականեան, Հայկական միջնադարեան ժողովրդական երգեր, էջ 231:

³⁰ Տէ՛ս Ն. Ակինեան, նշ. աշխ., էջ 135:

Նա Լիպարիտի հետ չի սպանուել, նույնիսկ բաւական ուշ՝ 1466թ., դեռ կենդանի է եղել: Դա ապացուցւում է Ն. եպ. Ծովականի կողմից յայտնաբերուած ձեռագրական մի յիշատակարան-հատուածով, որը դժբախտաբար կրճատուած է: Ծովականը գրում է, որ «Մուանձտեանցի Թորոս Աղբարի Բ. հատորին մէջ Չնփուշի Սիրահայեաց Ս. Աստուածածնի վանքի ձեռագիրներուն կարգին կայ Ճաշու Գրքի մը յիշատակարանը, դժբախտաբար կրճատուած, ասպէս. «...Գրեալ թվ. ԶԺԵ (=1466) ձեռամբ երկու գրչաց՝ Յակոբ Քահանայի և Պաւղոս Սարկաւագի, ի Խարբերդ քաղաքի, ի Թաղն Սինամուտ, ի կաթողիկոսութեան տեառն Սարգսի եւ եպիսկոպոսութեան տեառն Յովհաննիսի, և ի ամիրայութեան Հասան Խանի, ի խնդրոյ Տէր Յոն. եպիսկոպոսին, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զաւրավարին ...ի յիշատակ իւր եւ ծնողացն Լիպարտին եւ Մանանային...»³¹: Ահա այս Լիպարիտի և Մանանայի որդի Յովհաննէս եպիսկոպոսը, թուում է, Թլկուրանցու տաղում նշված համանուն «ուղեակն» է, քանի որ և՛ Լիպարիտ, և՛ Մանանա անունները գրեթէ եզակի են մնում մեր պատմութեան մէջ:

Ն. Ակինեանը ձեռագրերում գտել ու հրապարակել է նաեւ Լիպարիտի քրոջ մասին, գրոյցը՝ «Քոյրն Քաջին Լիպարտի՝ ըմբշամարտ»³² խորագրով, թէ ինչպէս Լիպարիտի քոյրն ըմբշամարտում է «խամայելացի» մի փահլեւանի հետ ու յաղթում և որպէս պարգեւ պահանջում այնքան բամբակ, որքան որ կարողանայ շալակել: Սակայն, երբ տուն է հասնում և բաց անում բամբակը, «նայ ետես, որ եղեալ էր ի մէջ բամպակին քաւս, որ կայր քառասուն լիտր»³³: Թագաւորը խաբել էր Լիպարիտի քրոջը և Մարայ ըմբիշին յաղթելու դէպքում խոստացած բամբակի մէջ դրել քառասուն լիտրանոց քար³⁴:

«Տաղ քաջի Լիպարտինը» հարուստ է պատկեր-համեմատութիւններով, որոնք շատ տպաւորիչ են, յուզական ու ինքատիրապ: Ահա այդպիսի իւրօրինակ պատկերներ են հետեւեալ տողերը.

**Ջերթ սուրբ Սարգիս քաջն ի նըման,
ի սուրբ Թորոս, ի սուրբ Վարդան,
Քան ըզՄուշեղն այլ խիստ յաղթող,
քան ըզՏրդատ Հայոց արքայն:**

Կամ՝

Արիւն հանէր զերթ գետ Ջիհան:

«Հանց որ արիւն՝ գետեր ելան», - գրում է բանաստեղծը և կենսատու Զահան գետի հետ միասին աւելի է ամբողջանում քաջ Լիպարիտի հերոսական նկարագիրը, աւելի են ընդգծւում նրա անօրինակ քաջագործութիւնները: Շատ բնորոշ են չարութեամբ համակուած եգիպտացիներին բնութագրող տողերը՝

Ջերթ քացխով տիկ չարեօք լըցան:

Առաւել ցայտուն և յաջողուած է, թերեւս, հետեւեալ պատկերը.

**Այն անօրէն չար կենդանին,
որ են նոքա մահմետական,**

³¹ Ն. եպ. Ծովական, Տաղգիրք, էջ ԺԲ:

³² Ն. Ակինեան, նշ. աշխ., էջ 133-134:

³³ Տե՛ս նոյն տեղում, էջ 134:

³⁴ Տե՛ս նոյն տեղում: Ի դէպ, քարի իմաստն այլ կերպ է բացատրել բանասէր Գ. Արքարեանը, որը «Հովհաննէս Թլկուրանցի. Տաղեր» գրքի գրախօսութիւնում գրել է. «Հայ մատենագրութեան մէջ քաւ քաղը, բացի սովորական քաւից, ունի նաև անգին քաւի իմաստ, և Լիպարտի գրոյցում խոսքը վերաբերում է անգին քաւին: Թագաւորը աղջկա հղորոյթամբ հիացած, բամբակի պարկի մէջ 40 լիտրանոց անգին քաւ է դնում» (տե՛ս «Տեղեկագիր», 1961, թիւ 3 էջ 97):

Եւ ի յահէն քաջ Լիպարտին

զինչ զոռ դողան՝ առաջ չի գան:


«Տաղ քաջի Լիպարտինը» ժողովրդի հոգում ազատագրական կռուի գաղափարը բորբոքող գեղեցիկ ու սրտայոյզ մի գործ է, անմահացնող յիշատակն այն քաջ նահատակի, որը «պատմութեան մէջ փայլակի մը պէս կերելի և կանցնի, բայց... պայծառ և բաւերախտ փայլակի մը պէս» (Ղ. Ալիշան): Քաջ Լիպարտի վսեմ, հայրենասէր և տիրասէր հոգու վառ նկարագիրը, նրա նահատակման սրտաճմլիկ պատկեր սուգը, Սսոյ աւերումի և ընդհանուր ժողովրդական սիրուած հերոսի մահուան առթիւ, իրօք որ «պատկերներ են կտաւի վրայ առնուած թաւմ գոյներով»³⁵:

V. EGHIAZARYAN

THE EPIC VERSE ABOUT GENERAL LIPARIT

Summary

General Liparit was one the famous figures in the last period of the Cilician Armenian state. He fell victim in the battle for Armenian independence against the Sultanate of Egypt. The feat and tragic death of this legendary hero are praised in the work "Verse devoted to brave Liparit" by the famous Armenian medieval writer Hovhannes Tlkurantsi. "The verse" is a poetical tragedy and has specific artistic and historical value.



³⁵ Ն. Ակիմեան, նշ. աշխ., էջ 135: